



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՅ-ԷՍ-2017/44

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդորդը (այսուհետ՝ նաև խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.09.2017թ. թիվ 03/26-3/16139-17 գրությամբ «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Զ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 29.08.2017թ. թիվ 1/18-2/33085-17 գրության հիման վրա, 05.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Զ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 29.08.2017թ. թիվ 1/18-2/33085-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար դրոշների գնման նպատակով կազմակերպված գնման գործընթացի արդյունքում «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ 18.07.2017թ. կնքել է ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով «Պետության կարիքների համար դրոշների մատակարարման» գնման պայմանագիր, սակայն ապրանքների մատակարարումն իրականացնելու նպատակով սահմանված ժամկետում ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո հրաժարվել է պատվիրատուի հետ կնքել համաձայնագիր: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ստիպված է եղել միակողմանի լուծել 18.07.2017թ. կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով «Պետության կարիքների համար դրոշների մատակարարման» գնման պայմանագիրը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի միջև 18.07.2017թ. կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով գնման պայմանագրի 8.13. կետը և «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի 08.08.2017թ. թիվ 44687-17 գրությունը»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայանալիք նիստի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.09.2017թ. թիվ 03/26-3/16139-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել Ընկերության կողմից լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԷՍ-2017/44 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 05.09.2017թ. թիվ 03/26-3/16139-17 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 29.08.2017թ. թիվ 1/18-2/33085-17 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի միջև 18.07.2017թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով դրոշների մատակարարման պայմանագիրը, «18.07.2017թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Համաձայնագիր-1»-ի նախագիծը, ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 26.06.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի 04.08.2017թ. գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին ուղղված 28.08.2017թ. թիվ 1.3/18-2/32880-17 գրությունը.

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հանձնաժողովի 26.06.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ Հանձնաժողովը

որոշել է ընթացակարգի 1-ին չափաբաժնով «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին ճանաչել ընտրված մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի միջև 18.07.2017թ. կնքվել է N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով դրոշների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

- հավելված 1-ով նախատեսված Ապրանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն պարտավորվել է մատակարարել թվով 40 հատ «Դրոշներ տակդիրով և ձողով» ապրանքատեսակ՝ 336.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Պատվիրատուն հիմք ընդունել Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացնելու նպատակով հատկացված ֆինանսական միջոցները՝ ծանուցել է «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին՝ առաջարկելով համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքել

«18.07.2017թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Համաձայնագիր-1»-ը՝ Ընկերությանը ներկայացնելով նախագիծը:

Սակայն, 04.08.2017թ. «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն գրություն է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին (մտից N44687-17 առ 08.08.2017թ.)՝ հայտնելով, որ Ռուսաստանի Դաշնություն մշտական բնակության մեկնելու պատճառով չի կարող իրականացնել N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագրով նախատեսված մատակարարումները, և խնդրել է Պայմանագիրը չեղյալ համարել:

Պատվիրատուն 28.08.2017թ. գրությամբ դիմել է «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին՝ նշելով, որ վերջինս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ 18.07.2017թ. կնքել է ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով պայմանագիր, սակայն ապրանքների մատակարարումն իրականացնելու նպատակով սահմանված ժամկետում ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո հրաժարվել է պատվիրատուի հետ կնքել համաձայնագիր, ինչի արդյունքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի լուծել կնքված Պայմանագիրը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և Ա/Ձ Աշոտ Ազիզյանի միջև 18.07.2017թ. կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 ծածկագրով գնման պայմանագրի 8.13 կետը և Ա/Ձ Աշոտ Ազիզյանի 08.08.2017թ. թիվ 44687-17 գրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն կնքել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետ գնման պայմանագիր, սակայն Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացնելու

նպատակով ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո հրաժարվել է կնքել գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան համաձայնագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհուրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Խորհուրդը գտնում է, որ «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն՝ հրաժարվելով գնման Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Համաձայնագիրը կնքելուց՝ խախտել է Պայմանագրի 8.13 կետով նախատեսված պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.09.2017թ. «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների


ցուցակում ներառելու նպատակով խորհրդում նախաձեռնված պաշտոնական
ընթացակարգը բավարարել:

2. «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Զ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու
իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական
կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ